

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
N «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ՓԾՁԲ-20/1»

ք. Երևան

«16» «ապրիլ» 2020թ.

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանի, որը գործում է տեսչական մարմնի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Արման Դայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից և Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կերպով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի Վահան Պապիկյանի (այսուհետև՝ Վճարող), բոլորը միասին (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն շրջանակային համաձայնագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2020 թվականի ընթացքում ձեռք բերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի միջոցով փորձաքննության ծառայություններ ձեռք բերելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուի ներկայացուցիչը (տեսուչը) համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրությամբ, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից ընտրում է ընտրված մասնակից և նույն օրը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ սահմանված ուղեկցող նամակով (Ձև N 2) պատվիրում է փորձաքննությունը:

1.3 Պայմանագրի 1.2-րդ կետում նշված համակարգչային ծրագիրը կազմվում է գրանցման մասին հայտերի գնահատման արդյունքների հիման վրա՝ հիմք ընդունելով մատուցվող Ծառայության տեսակը:

1.4 Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը Վճարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված լաբորատոր փորձաքննությունների ծառայությունների դիմաց կատարել վճարումներ՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պայմանագրային հիմունքներով ներգրավելով նաև տվյալ ոլորտում համապատասխան գիտելիքներ և աշխատանքային փորձ ունեցող մասնագետների.

2.1.2 Եթե Պայմանագրի N 1 հավելվածում նշված Ծառայությունը մատուցվել է թերի կամ ոչ պատշաճ.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր ընտրությամբ պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները կամ փոխարինել անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3-րդ կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում: Կատարողի կողմից թույլ տված Պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածում նշված Ծառայությունը մատուցվել է թերի կամ ոչ պատշաճ,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը.

2.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե 2.1.1-ին և 2.1.5-րդ կետերում նշված ստուգման արդյունքում հայտնաբերվել է խախտում:

2.1.5. Յուրաքանչյուր եռամսյակը մեկ ստուգել Կատարողի՝ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, օգտագործվող նյութերի առկայությունը, սարքինությունը և ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի առկայությունը:

2.2 Պատվիրատուն և Վճարողը պարտավոր են՝

2.2.1 Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Վճարողը պարտավոր է Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5-րդ կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Վճարողից պահանջել վճարելու իր կողմից կատարված և Պատվիրատուի կողմից Պայմանագրով սահմանված կարգով ընդունված Ծառայության դիմաց իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Վճարողի կողմից Պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պայմանագրի 5.5-րդ կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Լաբորատոր փորձաքննության ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում փորձարկման արձանագրության 2 օրինակը ուղարկել Պատվիրատուին՝ կցելով սպեկտրաֆոտոմետրիկ (ֆոտոկոլորիմետրիկ), ատոմասբորբջիոն սպեկտրամետրիկ և քրոմատագրաֆիկ մեթոդների համապատասխան սպեկտրները և քրոմատագրերը:

2.4.3 Յուրաքանչյուր միս՝ մինչև հաջորդող ամսվա 10-ը, Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով sample@ssfs.am հասցեով ներկայացնել տեղեկատվություն Պայմանագրի շրջանակում իրականացված լաբորատոր փորձաքննությունների քանակի և անհամապատասխանությունների մասին՝ համաձայն ձևի:

2.4.4 Ապահովել Պայմանագրի շրջանակում իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների երրորդ անձանց համար գաղտնիությունը:

2.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տույժը և տուգանքը Պատվիրատուի կողմից ծանուցվելուց հետո եռօրյա ժամկետում:

2.4.6 Պայմանագրի (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.7 Պայմանագիր կնքելուց հետո, մասնակցության իրավունքի և (կամ) հրավերով նախատեսված որակավորման չափանիշների նկատմամբ իր հատկանիշների փոփոխության դեպքում, Պատվիրատուին ներկայացնել Պայմանագիրը դադարեցնելու մասին դիմում:

2.4.8 Պայմանագրի 2.4.4-րդ կետի պահանջները չկատարելու, ինչպես նաև պայմանագիր կնքելուց հրաժարվելու կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում Պատվիրատուի համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար (մեկ միլիոն ՀՀ դրամ):

2.4.9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ սահմանված փորձարկման արձանագրությունը (Ձև N6) ստորագրելու իրավասու անձանց (Կատարողի ղեկավար, պատասխանատու կատարողներ) փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնել Պատվիրատուին:

2.4.10. Լաբորատոր փորձաքննությունների արդյունքների վերաբերյալ Պատվիրատուին տրվող եզրակացության մեջ ներառել անհամապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերին, ինչպես նաև օգտահանման հնարավորությունը կամ ոչնչացումը՝ համաձայն «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կատարման արդյունքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի (այսուհետ՝ Ակտ) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ընթացիկ ամսվա վերջին աշխատանքային օրը Պատվիրատուին է հանձնում տվյալ ամսվա ընթացքում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված Ակտի 2 օրինակ:

3.2. Ակտը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Ակտը չի ստորագրվում և Պատվիրատուին՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն Ակտը ստանալու պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Ակտի մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայությունների միավոր գները, ներառյալ ԱԱՀ-ն ըստ լաբորատոր փորձաքննության տեսակների հաստատված են Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 802-Լ հրամանով: Գները ներառում են Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայությունների մատուցման միավոր գները կայուն են և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գները:

4.2. Վճարողը Պատվիրատուին մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Ակտի հիման վրա՝ Պատվիրատուի կողմից Ակտը ստորագրելու և Վճարող կողմին այն ներկայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, եթե փորձաքննության վճարը փոխանցվել է Վճարողի հատուկ հաշվին՝ համաձայն «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում մինչ այդ Կողմերի միջև առկա պարտավորությունների պատշաճ կատարումից և Պայմանագիրը խախտելու համար պատասխանատվությունից:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.4. Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են ձեռք բերվող Ծառայության ծավալների գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.5. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.7. Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.8. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմին
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ՝ 0045227



(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Նարեկ» գիտահետազոտական
ՓԲԸ
ք. Երևան, Գետառի փ. 4
բանկը՝ «Արդշիրյանկ» ՓԲԸ
հ/հ 2472300013380999
ՀՎՀՀ՝ 0040364



(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ճ Ա Ր Ո Ղ

Վարչապետի աշխատակազմ
Ք. Երևան, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033909
ՀՎՀՀ՝ 0250555



(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1

« 16 » « ապրիլ » 2020 թ.

N « Հ Հ Կ Ե Ս Ա Տ Մ - Փ Ծ Զ Բ - 20 / 1 » շրջանակային համաձայնագրի

Ց Ա Ն Կ

Մ Ա Տ ՈՒ Ց Կ ՈՂ Լ Ա Բ ՈՐ Ա Տ ՈՐ Փ ՈՐ Զ Ա Ք Ն Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի

Փորձաքննության ենթակա ցուցանիշը		Փորձարկման սարքավորումը կամ միջոցը	Փորձաքննության արժեքը (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ
Թունավոր տարրեր և նյութեր	Կապար	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Արսեն	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Կադմիում	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Սնդիկ	Սպեկտրաֆոտոմետր	4000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Պղինձ	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Երկաթ	Սպեկտրաֆոտոմետր	4000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Նիկել	Սպեկտրաֆոտոմետր	4000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000
	Քրոմ	Սպեկտրաֆոտոմետր	4000
		Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	6000

		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Անագ		Սպեկտրաֆոտոմետր	4000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Սելեն		Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Ֆտորիդ		Սպեկտրաֆոտոմետր	4000
Ծարիր		Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Ֆիանիդ		Սպեկտրաֆոտոմետր	5000
Բարիում		Ինվերսիոն վոլտամպերմետրիա	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	7000
Մոլիբդեն		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Բերիլիում		Ինվերսիոն վոլտամպերմետրիա	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Մանգան		Ատոմաբուրբջիոն սպեկտրաչափ	6000
Ալյումինիում		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Ցինկ		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
	Կալցիում	Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
	Նատրիում	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
	Կալիում	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբուրբջիոն սպեկտրասկոպ	6000
Մագնեզիում		Ինվերսիոն վոլտամպերմետր	3000

		Ատոմաբարրացիոն սպեկտրասկոպ	6000
	Վանադիում	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
		Ատոմաբարրացիոն սպեկտրասկոպ	6000
	Կորալտ	Սպեկտրաֆոտոմետր	3000
		Ատոմաբարրացիոն սպեկտրասկոպ	6000
	Ֆենոլներ	Սպեկտրաֆոտոմետր	4000
	Ֆոսֆոր	Սպեկտրաֆոտոմետր	4000
	Բորատներ	Սպեկտրաֆոտոմետր	4000
	Սիլիկատներ	Սպեկտրաֆոտոմետր	4000
Ռադիոնուկլիդներ	Յոդ	Ինվերսիոն վոլտամպերմետր	3000
Հակաբիոտիկներ	Տետրացիկլինի խումբ	Մանրէաբանական	5000
	Ստրեպտոմիցին	Մանրէաբանական	5000
	Պենիցիլին	Մանրէաբանական	5000
Սննդային հավելումներ	E-536 Կալիումի ֆերոցիանիդ	Տիտրում	7000
		Սպեկտրաֆոտոմետր	
	E-967 Քսիլիտ	Տիտրում	20000
		Սպեկտրաֆոտոմետր	
Մնացորդային նյութեր	Սինթետիկ ներկանյութեր (մեկ ցուցանիշը)	Սպեկտրաֆոտոմետր	7000
Մանրէաբանական ցուցանիշներ	ՄԱՖԱՄ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	ՄԸՔ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	ՄԱՄք	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	ԱՑԽՄ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Աղիքային ցուպիկ (E. coli)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Բացիլիոս Ցեռեոս (Bacillus cereus)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Սուլֆիտ վերականգնող կլոստրիդիաններ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Սուլֆիտվերարտադրող կլոստրիդ. սպորներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000

Ոսկեգույն ստաֆիլոկոկ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Ախտածին՝ այդ թվում սալմոնելաներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Բորբոսասնկեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Խմորասնկեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Բորբոսասնկեր/ Խմորասնկեր գումարային	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Լիստերիա (<i>L. monocytogenes</i>)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Էնտերոկոկկեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Ջերմատուլերանտ կոլի ձևեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Ֆեկալ ստրեպտոկոկեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Պսևդոմոնաս աերուգինոզա (<i>Pseudomonas aeruginosa</i>)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Կլոստրիդիում պերֆրինգենս	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Կաթնաթթվային մանրէների քանակ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Բիֆիդոբակտերիաներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Սպոր առաջացնող մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ (<i>Bacillus cereus</i> և <i>B.Polymyxa</i>)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Սպոր առաջացնող մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ (<i>Bacillus subtilis</i>)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Սպոր առաջացնող թերմոֆիլ անաերոբ, աերոբ և	Դասական մանրէաբանական մեթոդ	5000

	Ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ		
	Սպոր չառաջացնող մանրէներ այդ թվում՝ կաթնաթթվային և/կամ բորբոսասանկեր և/կամ խմորասանկեր	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Պրոբիոտիկ մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Ացիդոֆիլինային մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Մեզոֆիլ կլոստրիդիաներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Վիբրիոն պարահեմոլիտիկուս (Vibrio parahaemolyticus)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Պրոտեոս խմբի մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Պսիխրոտորոֆ մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Կամպիլոբակտերիաներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Yersinia ցեղի մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Էնտերոբակտեր սակազակի (Enterobacter sakazakii)	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Սոմատիկ բջիջների քանակ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Մեզոֆիլ անաերոբ բակտերիաների սպորներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Enteobacteriaceae ընտանիքի մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
	Շիզելա ցեղի մանրէներ	Դասական մանրէաբանական մեթոդ	5000
Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ	Մեխանիկական խառնուրդների, խմորման նշանների որոշում	Դիտողական	3000

Պնդեցման ջերմաստիճանի որոշում	Ջերմային (ջերմաչափ)	3000
Գույնի որոշում	Քիմիական, տեսողական	3000
Պղտորության որոշում	Քիմիական, տեսողական	3000
Հալման ջերմաստիճանի որոշում	Ջերմային (ջերմաչափ)	3000
Հանքային նյութերի որոշում	Դիտողական	3000
Օքսիմետրիֆուրֆուրոլի որոշում (որակական)	Քիմիական	7000
Օքսիմետրիֆուրֆուրոլի որոշում (քանակական)	Սպեկտրաչափական	7000
Աղացվածքի խոշորության որոշում	Կշռային, լաբորատոր մադեր	2000
Մետաղամագնիսական խառնուրդներ	Դիտողական, մագնիս	2000
Զանգվածի կորստի որոշում	Կշռային	2000
Բարորակ, փչացած, դեղնած միջուկի պարունակություն, միջուկի խոշորություն	Դիտողական	2000
Լցոնած պտղի քանակի որոշում	Կշռային	2000
Աղբախառնուկների պարունակություն	Դիտողական	2000
Ալրային մասի պարունակություն	Կշռային, լաբորատոր մադեր	2000
Այլ բույսերի սերմերի պարունակություն	Դիտողական	2000
Օճառ (որակական)	Քիմիական	3000
Ըմպելիքի կայունություն	Դիտողական	2000
Լցման մակարդակ	Ծավալաչափական	2000
Կարամելային նմուշի ջերմաստիճան	Ջերմային (ջերմային)	2000
Տիտրվող աղաթթվի ծավալային մաս	Տիտրում	3000
Բեկման ցուցիչ	Ռեֆրակտոմետր	3000
Փրփուրի բարձրություն	Դիտողական	2000
Փրփուրի կայունություն	Դիտողական	2000
Թրջվելիություն	Կշռային	2000
Պտղամսի որոշում	Կշռային	2000
Նեկտարում հյութի և խյուսի նվազագույն ծավալային մաս	Կշռային	2000
Կայունություն	Դիտողական	2000
Եփվածության որոշում	Դիտողական	2000

Էլեկտրական ջերմահաղորդականություն	Կոնդուկտոմետր	3000
Ընդհանուր կոշտություն	Տիտրացիա	3000
Ճարպի ամրության որոշում	Քիմիական	3000
Արգանակում սպիտակուցների առաջնային տրոհման մթերքների որոշում (պղնձարջասպի փորձ)	Քիմիական	3000
Ֆորմալինային փորձ	Քիմիական	3000
Ջրածնային ցուցիչի (pH) որոշում	pH-մետր	2000
Թթվության որոշում	Տիտրում	3000
Պերօքսիդային թվի որոշում	Տիտրում	3000
Մաքրության աստիճան	Ֆիլտրում և դիտում	2000
Լուծելիություն	Քիմիական	3000
Կաթի տեսակարար կշռի որոշում	Լակտոդենսիտոմետր	2000
Էմուլսիայի կայունության որոշում	Քիմիական	3000
Ծծմբաջրածնի որոշում	Քիմիական	3000
Ռեդուկտազայի որոշում	Քիմիական	3000
Տրի մեթիլ ամինի որոշում	Տիտրում	3000
Օճառացման թվի որոշում	Տիտրում	3000
Դիաստազային թվի որոշում	Քիմիական	3000
	Սպեկտրաչափական	9000
Թթվածնի բիոքիմիական պահանջի որոշում	Տիտրում	3000
Մակերևութային ակտիվ նյութերի որոշում	Քիմիական	5000
Մետասիլիկաթթվի որոշում	Քիմիական, տիտրացիա	3000
Հիմնայնություն	Տիտրացիա	3000
Նավթամթերքների որոշում	Քիմիական	7000
Կողմնակի խառնուրդների և վնասատուների որոշում	Դիտողական մանրադիտակ	2000
	Կշռային	1500
Կալցիումի, մագնեզիումի, կալիումի իոններ (մեկ ցուցանիշը)	Տիտրում	3000
Նմուշի օքսիդացում	Տիտրում	3000
Այլ տեսակի օսլայի խառնուրդներ	Տիտրում	3000
Ոչ ճարպային խառնուրդներ		3000

Հացի վնասատուներով վարակվածություն	Դիտողական, մանրադիտակ	2000
Հանքայնացում կամ չոր մնացորդ	Կշռային	2000
Նատրիումի եռուլֆատ	Տիտրում	3000
Ալդեհիդների որոշում	Քիմիական	3000
Պերօքսիդազայի փորձ	Քիմիական	3000
Ամոնիումի աղերի որոշում	Քիմիական	3000
Պաստերիզացիայի որակի ստուգում (Ֆոսֆատազայի որոշում)	Տիտրում	3000
Սպրեդներում ճարպային ֆազի որոշում	Քիմիական	3000
Կեղծվածության որոշում (սողա, ամիակ, ջրածնի պերօքսիդ)	Քիմիական	3000
Մածուցիկություն	Վիսկոզիմետր	3000
Յոդային թվի որոշում	Տիտրում	3000
Անջատված ճարպի կայունության որոշում	Քիմիական	3000
Պեկտինային նյութերի որոշում	Տիտրում	3000
Սուլֆիտների որոշում	Կշռային	1500
Պրոլինի որոշում	Սպեկտրաֆոտոմետրիկ	7000
Ջրում չլուծվող չոր նյութերի որոշում	Կշռային	8000
Հարաբերական խտություն	Կշռային	1500
Սպիրտների, նախնական քաղցում իրական էքստրակտի որոշում և նախնական քաղցում չոր նյութերի հաշվարկ (մեկ ցուցանիշը)	Թորում, կշռային ռեֆրակտոմետր	8000
Ֆերոխառնուկների որոշում	Կշռային	1500
Կրճատող նյութեր	Կշռային	1500
Հատիկաչափական կազմի որոշում	Կշռային	1500
Հում բջջանյութ	Կշռային	3000
Մշակված ձկնատեսակների բուֆերայնության որոշում	Տիտրում	4500
Ձկան պահածոյում յուղի մեջ նստվածքի որոշում	Կշռային	2500

Բրոմաթթվի, բորաթթվի, բենզոլաթթվի որոշում (մեկ ցուցանիշը)	Տիտրում, սպեկտրաֆոտոմետր	13000
Ամինային ազոտի որոշում	Տիտրում	7000
Դոմոլաթթվի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	5000
Սպիտակուցային զանգվածում ջրածնի գերօքսիդի որոշում	Տիտրում	7000
Կալցիումի կարբոնատի որոշում	Տիտրում	5000
Սպիտակուցի, ընդհանուր ազոտի որոշում	Կելդալի մեթոդ	8000
Կարբոնատային կոշտության որոշում	Տիտրում	4000
Ակտիվ քլորի (ազատ և կապված) մնացորդային քանակության որոշում	Տիտրում	4000
Մակերևութային ակտիվ նյութերի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Կարբոնատի և բիկարբոնատի որոշում	Տիտրում	5000
Պոլիֆոսֆատների որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Էթիլ սպիրտի ծավալային մաս	Թորում, աերոմետր	2500
Ցնդող հիմքեր, ազոտ	Թորում, տիտրացիա	3000
Նատրիումի բենզոատ	Տիտրում	3000
Ուրոտրոպին	Տիտրում	3000
Սոսնձանյութ, քանակական	Կշռային	3000
Գինեթթվի որոշում	Տիտրում	4000
Կարոտինի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Ֆորմոլային թիվ	Տիտրացիա	3000
Ֆուրֆուրոլի զանգվածամաս	Քիմիական	9000
	Սպեկտրաֆոտոմետր	7000
Ֆոսֆորի զանգվածային մաս	Կշռային	3000
	Սպեկտրաֆոտոմետր	7000
Բաղադրիչների զանգվածային մաս	Կշռային	2500
Օսլայի զանգվածային մաս (որակական)	Քիմիական	4000
Թթուների զանգվածային մաս	Տիտրում	3000
Մրգահյութի զանգվածային մասի որոշում	Կշռային (ցենտրիֆուգ)	2500

Ջրալուծ էքստրակտիվ նյութերի զանգվածամաս	Կշռային	2500
Ընդհանուր կաթնաթթվի զանգվածային մաս	Տիտրում	3000
Օրգանական թթուների զանգվածային մաս	Թորում, տիտրացիա	3000
Տանինի զանգվածային մաս	Տիտրում	4000
Չոր նյութերի զանգվածային մաս	Կշռային	2500
Ճարպի կամ յուղի զանգվածային մաս	Բուտիրոմետրիկ, կշռային	2500
Յուղազերծ նյութում խոնավության զանգվածային մաս	Կշռային	2500
Չոր նյութում յուղի զանգվածային մաս	Կշռային	2500
Չոր անյուղ կաթնային մնացորդի զանգվածային մաս	Կշռային	2500
Սախարոզայի զանգվածային մաս	Տիտրում /Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	5000
Ազատ հանքային թթուների զանգվածամաս	Տիտրացիա	3500
Սպիտակուցի զանգվածային մաս	Կելլալ	7000
Նիտրատների զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	6000
Շաքարների զանգվածամաս	Տիտրում	5000
Ածխաջրերի զանգվածային մաս	Տիտրում	5000
Մոխրի զանգվածային մաս	Կշռային	2500
Վերականգնվող շաքարների զանգվածային մաս	Տիտրում	3500
Ընդհանուր էքստրակտի զանգվածամաս	Կշռային, պիկնոմետր	3000
Չօճառացվող նյութերի զանգվածային մաս	Քիմիական	4000
	Կշռային	1500
Դեֆորմացված մակարոնի զանգվածամաս	Դիտողական	2000
Հիդրոկարբոնատ իոնների զանգվածամաս	Տիտրում	3500
Լուծվող չոր նյութերի զանգվածամաս	Ռեֆրակտոմետր	3500

Զարդոնի զանգվածամաս	Դիտողական	2000
Եթերային յուղերի զանգվածային մաս	Թորում, տիտրում	3000
Ածխածնի երկօքսիդի զանգվածային մաս	Քիմիական Մանոմետր, աֆրոմետր	3500
Կերակրի աղի զանգվածային մաս	Տիտրում	3000
Քլորիդների զանգվածային մաս	Տիտրում	3000
Ամոնիակի զանգվածային մաս	Քիմիական	5000
	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	
Լուծելի և անլուծելի մոխրի զանգվածային մաս	Կշռային	2000
Նստվածքի զանգվածային մաս	Կշռային	2000
Կոֆեինի զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	3000
Սորբինաթթվի զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	3000
Ալդեհիդների զանգվածամաս	Տիտրում	3000
Սիվուխային յուղերի զանգվածամաս	Տիտրում	3000
Եթերների զանգվածամաս	Տիտրում	3000
Ազատ թթուների զանգվածամաս	Տիտրում	3000
Վնասված մակերեսի զանգվածային մասի որոշում	Դիտողական	2000
Խոնավության զանգվածային մաս	Կշռային	2000
Բարձր սպիրտների զանգվածային մաս	Թորում, տիտրում	3000
Միջին եթերների զանգվածամաս	Թորում, տիտրում	3000
Ցնդող ճարպաթթուների զանգվածամաս	Թորում, տիտրում	3500
Աղաթթվում չլուծվող մոխրի զանգվածամաս	Կշռային	2000
Յոդի զանգվածամաս	Տիտրում	3500
Օսլայի զանգվածային մաս (քանակական)	Տիտրում	3500

	Ազատ ճարպաթթուների զանգվածային մաս	Տիտրում	3500
	Փշրանքի զանգվածամաս	Կշռային	2000
	Մանրուքի զանգվածային մաս	Կշռային	2000
	Ծծմբային թթվի կամ ծծմբի երկօքսիդի զանգվածային մաս	Տիտրում	5000
	Հում թաղանթանյութի զանգվածամաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	3000
	Ֆորմալդեհիդ	Ֆոտոկոլորիմետր	3500
	Ստիրոլ	Ֆոտոկոլորիմետր	3000
	Վինիլքլորիդ	Ֆոտոկոլորիմետր	3500
	Մեթիլմետ ակրիլատ	Ֆոտոկոլորիմետր	3500
	Հեքսամեթիլենդիամին	Ֆոտոէլեկտրական կալորաչափ	4000
	E-կապրուլակտամ	Ֆոտոկոլորիմետր	3500
	Ացետալդեհիդ	Ֆոտոկոլորիմետր	3500
	Մանրադիտակային հետազոտություն	Մանրադիտակ	2000
	Ձվադիտում	Ձվադիտակ (օվոսկոպ)	2000
	Ցնդող թթուներ	Թորում, տիտրում	4500
	Վիտամիններ (մեկ ցուցանիշը)	Սպեկտրաֆոտոմետր	8000
	Մակարուծական հետազոտություններ, հելմինթոզներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Մեթիլ սպիրտ	Սպեկտրաֆոտոմետր	7000
	Անասնաբուժասանիտարական փորձաքննություն /Մանրադիտակային հետազոտություն/	Մանրադիտակ Ֆիզիկաքիմիական	3000
	Արտաքին տեսք Համ և հոտ Խտաստիճան Արյունաքամության աստիճան Ջլերի և ճարպի վիճակ, Արգանակի բույր և թափանցիկություն,	Զգայորոշում	3000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմին
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ՝ 0045227



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ
ք. Երևան, Գետադի փ. 4
բանկը՝ «Արմինիոն» ՓԲԸ
h/h 2472300013380999
ՀՎՀՀ՝ 00403641



Վ Ճ Ա Ր Ո Ղ

Վարչապետի աշխատակազմ
Ք. Երևան, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011033900
ՀՎՀՀ՝ 0250558



